



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 հունվարի 2020թ. թիվ 36-Ա

«ՎԱՆԱՁՈՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ  
ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ  
ՆՎԱԶԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ  
ՄԱՐԶՊԵՏԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի ԹԻՎ 417-Ա  
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասով, 67-րդ հոդվածի 1-ին մասի «ա» և «ը» ենթակետերով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 10-ի N 1425-Ա որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի «գ» պարբերության և ՀՀ Լոռու մարզպետի 2019թ. նոյեմբերի 8-ի թիվ 636-Ա որոշման 2-րդ կետի՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ եմ.

1. «Վանաձորի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության 5,524,340,000 ՀՀ դրամ կազմող կանոնադրական կապիտալը նվազեցնել 228,650,000 ՀՀ դրամով՝ բաժնետոմսերի մարման միջոցով: Նվազեցումից հետո կանոնադրական կապիտալը սահմանել 5,295,690,000 ՀՀ դրամ:

2. Հաստատել կանոնադրության փոփոխությունը և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2011 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 417-Ա որոշմամբ հաստատված «Վանաձորի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության 4.2 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 5,295,690,000 (հինգ միլիարդ երկու հարյուր ինսուսնհինգ միլիոն վեց հարյուր ինսուսն հազար) դրամ, որը կազմում է 529,569 (հինգ հարյուր քսանինը հազար հինգ հարյուր վաթսուինը) հատ 10,000 (տասը հազար) դրամ անվանական արժեքով հասարակ (սովորական) բաժնետոմսեր:

Ընկերության կողմից թողարկված բոլոր 529,569 բաժնետոմսերը տեղաբաշխված են, սեփականության իրավունքով պատկանում են Հայաստանի Հանրապետությանը և լրիվ վճարված են նրա կողմից:

Ընկերության բոլոր բաժնետոմսերը հասարակ (սովորական) են, ոչ փաստաթղթային»:

3. Հանձնարարել «Վանաձորի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենին՝ դիմել պետական ռեգիստրի գործակալություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պետական գրանցման համար:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի պարտականությունների կատարող Լ.Վարդանյանի վրա:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

 Invalid signature

X 

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2020թ. հունվարի 17  
ք.Վանաձոր

Կազմված է «17» «հունվարի» 2020թ.

Բաղկացած է 1 թերթից  
Տպագրված է 2 օրինակից  
Օրինակ \_\_\_\_

Հաստատված է  
ՀՀ Լոռու մարզպետի  
2020 թ. հունվարի 17-ի  
թիվ 36-Ա որոշմամբ

ՀՀ Լոռու մարզպետ

\_\_\_\_\_ Ա. Ղուկասյան

Գրանցված է  
ՀՀ իրավաբանական անձանց պետական  
ռեգիստրի կենտրոնական մարմնի կողմից  
«20» «դեկտեմբերի» 2011թ.  
գրանցման թիվ՝ 222.120.56556  
ՀՎՀՀ՝ 06945592  
20.12.2011թ. գրանցված կանոնադրության  
թիվ \_\_\_\_\_ փոփոխությունը գրանցված է  
ՀՀ իրավաբանական անձանց պետական  
ռեգիստրի գործակալության կողմից  
«\_\_\_\_» «\_\_\_\_\_» 2020թ.

**«ՎԱՆԱՁՈՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ»**  
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ  
**Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ Ա Ն**  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Կանոնադրության 4.2 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 5,295,690,000 (հինգ միլիարդ երկու հարյուր իննսուներես միլիոն վեց հարյուր իննսուսուց հազար) դրամ, որը կազմում է 529,569 (հինգ հարյուր քսանինը հազար հինգ հարյուր վաթսուինը) հատ 10,000 (տասը հազար) դրամ անվանական արժեքով հասարակ (սովորական) բաժնետոմսեր:

Ընկերության կողմից թողարկված բոլոր 529,569 բաժնետոմսերը տեղաբաշխված են, սեփականության իրավունքով պատկանում են Հայաստանի Հանրապետությանը և լրիվ վճարված են նրա կողմից:

Ընկերության բոլոր բաժնետոմսերը հասարակ (սովորական) են, ոչ փաստաթղթային»:

Սույն փոփոխությունը հանդիսանում է «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կանոնադրության (գրանցված 20.12.2011թ.) անբաժանելի և բաղկացուցիչ մասը: